


ԱՐՄ. ԹԱՐԱՁՑԱՆ



ՎԱՐԻԿԻ ՎԱՐԴԵ

891.995
թ-20

ՀԱՅՈՒՏԱՐԱՑ

30 MAY 2011

ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ

891.99 15

10 - 20

Խ

ՎԱՆԻԿԻ ՎԱՐԴԱ

ՀԱՅ ՊԵՏՐՈՒՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿՈՎԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1940

1970BBR2013

8646

Ամբագիր՝ Վ. Պողոսյան
Տեկ. Խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Բ. Ղուկասյան



1924
40

ԱՐՄ. ՏԱՄԱՅՅԻՆ
РОЗА ВАНИКА

Գև Արմ. ССР, Երևան, 1940

1

Չորրորդ դասարանի գերազանցիկ աշակերտ ե
գանգրահեր Վանիկը և այնքան ել աշխատասեր,
խելք... Տարվա յեղանակներից նա ամենից շատ
սիրում ե գարունը, իսկ գարնան որերին՝ ծառերն
ու ծաղիկները։ Յերբ ծաղիկներ կամ ծաղկած ծա-
ռեր ե տեսնում, ուրախությանն ել չափ չի լի-
նում։ Ամեն գարնան դպրոց գնալիս, նա տեսնում ե
ճանապարհի մյուս կողմում՝ պարտեզում բացվող,
կանաչ տերևներով ու ծաղիկներով վիթթող ծառեր
ու թփեր... Նայում ե Վանիկը սպիտակ ու կարմիր
ծաղիկներին, թփերի վրա փոփոլացած ծաղկեփնջե-
րին և սիրտը, ինչպես սափոր, լցվում ե ուրախու-
թյան հուզմունքով։

Վանիկի համար այնքան հաճելի յե զգալ գար-
նան արեկի ջերմությունը, մոր ձեռքի պես զեմքը
շոյող գարնան հովը, նայել պարտեզներին, նայել
ջինջ ողում բվացող մեղուների խաղին...

Այդպիսի մի որ եր, գարնան անուշ մի որ։
Չարաձճի Վանիկը, վոր դասերը պատրաստե-
լիս լուրջ ե լինում բարձր դասարանի աշակերտի
նման, հենց վոր հեռվում նկատեց դասընկերներին
և դասատու ընկեր Արփիկին, իսկատ անհանգստա-
ցավ... թևերը վեր պարզեց ինքնաթիռի իր մողելի
նման և սրբնթաց դեպի նրանց վագեց պարտեզի
պատի տակով անցնող փողոցն ի վար։

— Ուռաման, — Ջինջ ողում զրնդաց Վանիկի
ձայնը և խառնվեց պարտեզի մոտով, ձորակով հո-
սող առվի, քչքչան ջրերին...

— Ծաղիկներ, կանաչ ճյուղեր, նկարներ պիտի
բերենք Մայիսի 1-ի որը, — տոնից դեռ մի ամիս ա-
ռաջ այդ խոսքերն եյին հնչում ամեն մի աշակերտի
շուրթերին:

Դպրոցի բակում, դասատու ընկեր Արփիկի
շուրջն եյին խմբվել աշակերտները և հետաքրքրու-
թյամբ հարցեր եյին տալիս.

— Առաջին անգամ յերբ ե տոնվել Մայիսի
մեկը...

— Մայիսի մեկի առթիվ յես արդեն նկարում
եմ ընկեր Լենինին Գորկայում՝ յերեխայի հետ ըզ-
բոսնելիս:

— Յես ել սկսել եմ յուղաներկով նկարել ըն-
կեր Ստալինին՝ գրկած Մամլաքյաթին:

— Յես ել թաշկինակի վրա գործում եմ...—
հետեւ շարքերից ուրախ ձայնով ասաց Շ-րդ դա-
սարանի՝ ձեռագործ սիրող մի աշակերտուհի,
բայց ընդհանուր աղմուկի մեջ խլացվեց նրա ձայնը
և չլսեց, թե ում նկարն ե նա ցանկանում ասեղ-
նագործել:

— Յես ել իմ գերազանց թվանշաններով կղի-
մավորեմ պայծառ Մայիսի մեկը, — ձայն տվեց վեր-
ջին դասարանի մի աշակերտ...

— Յես ել պատրաստում եմ...

— Յես ել...— գոչում են չորս կողմից, թե ով
ինչով ե դիմավորում Մայիսի մեկը և շտապելով
նոր հարցեր են տալիս ընկեր Արփիկին:

— Իսկ դժւ ինչով ես դիմավորելու Մայիսի
մեկը, Վանիկ ջան, — շոյելով Վանիկի գանգրահեր
զլուխը, սիրալիր ձայնով հարցնում ե ընկեր Ար-
փիկը:

— Յես... յես...— շփոթվում ե Վանիկը և չի
իմանում թե ինչ պատասխանի...

— Հը, դե ասա իմանանք, դժւ ինչով ես դի-
մավորելու, — նորից հարցնում ե ուսուցչուհին: Բո-
լորը լուռ են և սպասում են Վանիկի պատասխանին:

— Իմ թվանշանները բարձր են, — վստահություն
առնելով պատասխանում ե նա և մտածում, թե
ել ինչ արժանի նվերով կարելի յե դիմավորել գար-
նան պայծառ, մեծ տոնը... Յեվ հանկարծ մի բան
և հիշում, նրա գլխում մի միտք ե փայլում.

— Հա, ընկեր Արփիկ, — սիրտն ուրախությու-
նով լցված, գոչում ե Վանիկը, — այ, թե ինչ պետք
ե բերեմ... Մեր տան առջեկի... Զե, չե, չե, դեռ
չեմ ասի...

Խոսքը շուրթերին կիսատ ե թողնում Վանիկը
և անչափ ուրախությունից ցատկուում տեղում, —
չե, միայն Մայիսի մեկին կտեսնեք իմ նվերը...
Մայիսի մեկին... Մի ստիպի ընկեր Արփիկ, չեմ
ասի: Միայն են կասեմ, վոր կրակի պես կարմիր
իմ եղ թանկագին նվերով կզարդարենք Լենին պա-
պի՝ դահլիճում դրած մեծ նկարը...


— Այ ապրես, վոր նվեր ես պատրաստում.
իհարկե արժանի նվեր կինի, այնպես չե... խրա-
խուսում ե ընկեր Արփիկը և մի ձեռքով շոյում
Վանիկի գանգուրները:

Բոլորը քայլում են գեպի դասարանները:

Դասերից հետո, յերբ աշակերտները տներն
եյին գնում, ընկեր Արփիկը քիչ հեռվից նորից նը-
կատելով Վանիկին, ձայն տվեց.

— Զմոռանաս Մայիսի մեկի նվերը...

— Կրերեմ, բա չպիտի բերեմ, — ուրախությունն
ու ժպիտն աչքերում պատասխանեց Վանիկը: Իսկ



յերը նաժապտաց, ուսուցչուհին շտեսավ, թե ինչպես
Վանիկի այտերից մեկի վրա սիրուն փոսիկ առա-
ջացավ...

3

Այդ գիշեր Վանիկն ուշ քնեց: Շարունակ մըտ-
քում, յերբեմն ել ցածրաձայն կրկնում եր ընկեր
Արփիկի խոսքերը.

— Չմոռանաս բերել Մայիսի մեկի նվերը...
— Եղ ի՞նչ ես ինքով քեզ հետ խոսում, Վա-
նիկ ջան,—անհանգստացած հարցրեց մայրը և շո-
յելով փորդու ճակատը, համբուրեց մայրական ջեր-
մությամբ...

— Վոչինչ, մայրիկ ջան, միտքս ընկեր Արփիկի
մոտ եր... Մայիսի մեկին զարդարելու յենք մեր
դպրոցը, շարքով յերթի յենք՝ դուրս գալու:

4

Մոտենում է Մայիսի մեկը, — հեղափոխական
մեծ տոնը: Վորքան անցնում են որերը, Վանիկն
ավելի յե շտապում, ավելի անհանգստանում... Ո-
րեկան մի քանի անգամ մտնում ե իրենց փոքրիկ
պարտեզը, մոտենում պատի տակ թագնված վարդի
թփին և պլշած աչքերով յերկար զննում, ապա
հեռանում հոնքերը կիտած, մի փոքր տխուրք: Բանն
այն ե, վոր վարդենու վրա դեռ կոկոն չեր բաց-
վել, իսկ Մայիսի մեկը մոտենում եր:

— Բա ի՞նչ պիտի տանեմ դպրոց Մայիսի մե-
կին, ախր յես խոստացել եմ, — տխուր մտմտում
ե Վանիկը: Յերկար մտածում ե նա, թե ինչպես
անի, վոր շուտ, շատ շուտ, մինչև Մայիսի մեկը
բացվի վարդը... Հետո հիշեց, հա... Զե՞ վոր մայ-
րիկը պարտեզը ջրելիս միշտ ասում եր.

— Զրեմ ծառերը, վոր միրզը շուտ հասնի և
խոշոր լինի...

Ել առանց ժամանակ կորցնելու Վանիկը վա-
ղեց տուն, մի բաժակ վերցրեց և սկսեց առվից
ջուր բերել, ածել վարդենու արմատին։ Յերկու որ
այդպես Վանիկը շուտ-շուտ ջրում եր թուփը, բայց
կոկոններն իսկի չեյին շտապում բացվել, ասես
Մայիսի մեկը նրանց չեր վերաբերվում։

— Սպասիր, այսոր ենքան ջուր տամ քեզ,
տեսնեմ վոնց չես բացվում, —իր հնարամտության
վրա ուրախացավ Վանիկը։

Յերկու որ հետո յերբ պարտեզ մտավ, ինչքան
յեղավ նրա զարմանքն ու ուրախությունը, — վարդի
կոկոններից մեկը պայթել, բացվել եյին արյան պես
մուգ կարմիր թերթիկները։ Ի՞նչ ցնծություն...
Ասես աշխարհի չափ մեծ նվեր ստացավ Վանիկը։

— Ի՞նչ լավ յեղավ, ջան, ջան, — ինդալով ծափ
տվեց նա և թռչկոտելով տուն վազեց՝ մայրիկին
հայտնելու բացվող վարդի մասին։

Յերկու որ հետո Մայիսի մեկն եր. իսկ վարդի
կոկոնը յերեկվա նման չեր — մի քիչ ավելի յեր
բացվել, ասես ժպտում եր։ Վանիկն ել առանց
համբերելու թփից զգուշությամբ պոկեց դեռ լավ
չբացված վարդը և թղթում ու կանաչներում խը-
նամքով փաթաթած դպրոց տարավ։ Հենց այդ ժա-
մանակ ընկեր Արփիկը, վոր ջրջապատված եր աշա-
կերտներով՝ լենինի մեծ նկարն եր զարդարում
կարմիր կակաչներով, մանուշակներով և կանաչ
ճյուղերով...

— Դե, յես արդեն բերել եմ իմ խոստացած
նվերը. այ, ես վարդն ե, — հեվալով մոտեցավ Վա-
նիկը և չկարողանալով խոսքը վերջացնել, փաթա-
թած վարդը մեկնեց ընկեր Արփիկին։



— Ինչ համեստ, բայց թանկագին նվեր ե,— հիացմունքի խոսքերով դիմավորեց ուսուցչուհին, վերցնելով դեռ չբացված վարդը, —ախր սա զեռ լավ չի բացվել, շատ շուտ ես պոկել, —նոր միայն նկատելով, վոր վարդը բացված չե, զարմանք կըտրած ձայնով ասաց ուսուցչուհին:

Վանիկի սրտին դիպան այդ խոսքերը: Նա լուռ պուլսը քարշ արեց. ներքեկի շրթունքը կախ ընկափ, լցվեց սիրտը և սկսեց բարձրածայն հեկեկալ...

— Այ, այ, այ, դու լաց ես լինում, —զարմացավ ընկեր Արփիկը և սկսեց գուրգուրել Վանիկի գանգրահեր գլուխը, —մի՛թե վիրավորեցի քեզ:

— Դե, լավ, մի տխրի, —շրջապատեցին նրան ընկերները և սկսեցին փաղաքշել, —դու բոլորովին մի տխրի. այ, տես, մենք այնքան ծաղիկներ ենք բերել, քո փոխարեն ել ե. բոլոր նկարներն ել գեղեցիկ կզարդարենք:

— Յեես... յեես... հեկեկանքների միջից հազիվ լսվեցին Վանիկի բառերը, —ամ... ամ... ամեն որ չուր եմ ած... ածել թփի տակ, վոր շտու բացվի, բերեմ հասցնեմ տոնին...

— Ապրես, շատ ապրես, վոր այդպես աշխատասեր ես, —հուզմունքով ասաց ընկեր Արփիկը և համբուրելով Վանիկի վարդագույն ճակատը, ձեռքով սրբեց նրա աչքերի արցունքները: Հետո, յերբ ընկեր Արփիկը դեռ չբացված վարդը դրեց Լենինի նկարի շրջանակի կանաչների ու ծաղիկների մեջ, Վանիկի ուրախությանը չափ ու սահման չկար:

— Ինչ լավ ե այդպես, —աղաղակեցին ու ծափահարեցին խմբված բոլոր աշակերտները. —այդպես լավ յեղավ ընկեր Արփիկ, թողեք Վանիկի բերած վարդն ել մնա շրջանակի վրա, մեր ծաղիկների հետ միասին:



Նայելով Իլյիչի ժպտացող նկարին և նրա մոտ
տեսնելով իր բերած վարդը, Վանիկն ինքն ել շատ
ուրախացավ ու ժպտաց, ապա ձեռքով սրբեց թաց
աչքերը: —Ամոթ ե, չտեսնեն արցունքներս, —մտա-
ծեց նա:

Հենց այդ պահին դպրոցի բակում հնչեց փո-
ղային նվազախմբի ձայնը: Բոլորի տրամադրու-
թյունը միանգամից բարձրացավ:

— Ուռա-աա... Կեցցե՛ Մայիսի մեկը, —ցնծագին
գոչերով, ապա «Հայրենիք» յերգի առաջին տողերը
յերգելով, խմբված աշակերտները դասարանից դուրս
գնացին միասին: Իսկ բոլոր ձայների մեջ պարզ
ու վորոշակի լսվում եր մի զվարթ ու զբնգուն
ձայն:


Դա մեր Վանիկի դուրեկան ձայնն եր, գար-
նան ջրերի նման կղկան ձայնը:

5

Հետեւյալ որը Մայիսի մեկն եր: Առավոտյան
Վանիկն իր դասընկերների հետ միասին մոտեցավ
ակումբի պատից կախած՝ Իլյիչ նկարին: Ինչքան
մեծ յեղավ նրանց զարմանքը... Վարդը, յերեկվա
դեռ չբացված վարդը, գիշերը բացվել եր և ասես
իրենց նայելով ժպտում, փոքրիկ աչիկների նման
նիկ եր անում մուգ-կարմիր թիթիկներով:

Գարնան արել հեռու-հեռու սարերի թիկունքից
դպրոցի պատուհանով ընկել եր պատին և իր ճա-
ռագայթներով վողողել ծաղիկներով զարդարված
Իլյիչ նկարը: Յեվ նա, աշխարհի բոլոր մանուկ-
ների սիրելի Իլյիչը ժպտում եր Վանիկին ու մյուս-
ներին և կարծես ասելիս լիներ.

— Տեսաք, իմ սիրուն, չարաձճի թոռնիկներ,
ձեր խնամած վարդը ինչպես ե բացվել և պայծա-
ռացել...



8646

ԳԻՆԸ 1 Ռ.

Կլավիսի լիազոր՝ Զ—1022. Հըմա. 49Ժ.

Պատիկը 562. Տիրաժ՝ 4000.

Հանձնված. և արտադրության 2 հաւաիսի 1939 թ.

Առողաջրված. և տաղագր. համար 31 դեկտեմբերի 1939 թ.

Պետհրատի և տպարան, Յեղելան, Լենինի 65.